ICRC

հունվար-դեկտեմբեր 2025

Կարմիր խաչի միջազգային կոմիտե
Պատվիրակություն Հայաստանում

Հիմնական գործունեություն

147

բանավոր, տեսաձայնային և գրավոր Կարմիր խաչի հաղորդագրություններ են փոխանցվել հակամարտության սրացումների առնչությամբ ազատազրկվածների և նրանց ընտանիքների միջև: Ավելին, ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով այցելել է հակամարտության առնչությամբ պահվող անձանց՝ դիտարկելով ազատազրկման պայմանները և նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև նպաստել հարազատների հետ նրանց կապի պահպանմանը:

778

զանգ և այց ենք ունեցել Երևանի և Գորիսի մեր գրասենյակներում՝ հակամարտության սրացումների արդյունքում ընտանիքների բաժանման առնչությամբ:

3,402

անձ օգտվել է հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության (ՀԱՀՍԱ) ծրագրերից:

201

տոննա առաջին վերարտադրության ցորենի սերմացու է տրամադրվել Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր, Կուտական, Ազատ, Կութ, Նորաբակ համայնքների 348 տնային տնտեսության (1,131 անհատի):

Անհայտ կորած և ազատազրկված անձինք, աճյունների հետ վարվեցողություն

424

անձ դեռևս անհայտ կորած է համարվում հակամարտության 2020-2023 թթ. սրացումների հետևանքով՝ ընտանիքների կողմից ստացված դիմումների համաձայն: Մենք շարունակում ենք աշխատել համապատասխան կառույցների հետ՝ որոնման և նույնականացման գործընթացը դյուրացնելու և ընտանիքներին հուզող հարցերին պատասխաններ տալու ուղղությամբ:

5

նախապատրաստական հանդիպում է կազմակերպվել իրազեկման/հիշատակի միջոցառումների կապակցությամբ Արարատի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի ընտանիքների համար:

90

ընտանիք, որոնք ներկայացնում են 1990-ականների և 2020–2023 թվականներին անհայտ կորած անձանց, մասնակցել են տարածաշրջանային վեց հանդիպումների: Դրանց ներկա էին Անհայտ կորած անձանց հարազատների համահայկական ասոցիացիայի համահիմնադիրները և ընտանիքների անդամներ Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից:

3

սոցիալական-մշակութային և երկու հիշատակի ու իրազեկման միջոցառում է կազմակերպվել անհայտ կորածների ընտանիքների համար Արարատի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:

14

տեղեկատվական հանդիպում է անցկացվել անհայտ կորածների ընտանիքների համար մեր «Սատարում» ծրագրի շրջանակներում Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

7

հանդիպում է անցկացվել մեր միջնորդությամբ հաղորդակցման հարթակի շրջանակում, որը ստեղծվել է ընտանիքների գործող բոլոր խմբերի միջև ավելի արդյունավետ համակարգման, երկխոսության և համախմբման նպատակով:

20

անդամ անհայտ կորածների ընտանիքներից մասնակցել է ընտանիքների և իշխանությունների միջև կառուցողական հաղորդակցության վերաբերյալ քառօրյա աշխատաժողովի:

6

ԴՆԹ փորձագետ

Դատաբժշկական գիտագործնական կենտրոնի (ԴԲԳԿ) ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է միջազգային դասընթացների և ուսումնական այցի դեպի Վրաստանի հավատարմագրված ԴՆԹ լաբորատորիա՝ ISO ստանդարտի պահանջներով հավատարմագրված լաբորատորիայի գործելակերպերին և խնդրահարույց հետմահու նմուշների ԴՆԹ պրոֆիլների վերլուծությանը ծանոթանալու նպատակով:

3

խորհրդատու

աշխարհահռչակ արտասահմանյան գենետիկական ընկերությունից տեխնիկական աջակցություն, այդ թվում՝ ԴՆԹ համընկնման ծրագրային ապահովում, գործնական դասընթացներ և ուղղորդում են տրամադրել՝ երաշխավորելով ընթացակարգերի, սարքավորումների և անձնակազմի կարողությունների պատշաճ փաստաթղթավորումը, գնահատումն ու ստանդարտացումը:

2

ԴՆԹ հայ փորձագետ

զեկույցով հանդես է եկել Բալկանյան դատաբժշկական գիտությունների ակադեմիայի 16-րդ տարեկան գիտաժողովին՝ նպաստելով տարածաշրջանային մակարդակով գիտելիքների և փորձի փոխանակմանը:

Մասնագիտացված լաբորատոր սարքավորումներ, ռեագենտներ և սպառողական նյութեր են տրամադրվել՝ ԴՆԹ անջատման, ամպլիֆիկացման և ախտահարման կանխարգելման գործընթացներն ամրապնդելու նպատակով, հատկապես անհայտ կորած անձանց հետ կապված խնդրահարույց կամ դեգրադացված նմուշների դեպքում:

ԿԽՄԿ աջակցության շնորհիվ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիան գերազանցության վկայական ստացավ աշխարհահռչակ գենետիկական ընկերությունից՝ փաստելով համապատասխանությունը որակի միջազգային ստանդարտներին և ամրապնդելով ԴՆԹ նույնականացման տեղական կարողությունների հարատևությունը:

© Սեդրակ Գրիգորյան

Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն

3,317 անձ՝ ներառյալ Ղարաբաղից Հայաստան տեղափոխվածները և սահմանամերձ համայնքներում բնակվողները, մասնակցել են քաղաքացիական բնակչության տարբեր շերտերի վրա զինված ընդհարումների թողած հոգեբանական հետևանքների վերաբերյալ մեր խմբային հանդիպումների՝ կազմակերպված Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) հետ:

125 անդամ անհայտ կորածների ընտանիքներից հոգեբանական աջակցություն է ստացել տնայցերի կամ աջակցության խմբերի միջոցով:

43 անձ, որոնք նախկինում պահվում էին անազատության մեջ հակամարտության առնչությամբ, մասնակցել են 34 անհատական և խմբային ՀԱՀՍԱ հանդիպումների:

192 խմբային և անհատական ՀԱՀՍԱ հանդիպում է կազմակերպվել Հայաստանի տարբեր մարզերում անհայտ կորածների ընտանիքների 38 անդամի համար:

18 բուժաշխատող Գորիսի հիվանդանոցից, որոնք ավարտել էին «Օգնիր օգնողին» դասընթացը 2024թ.-ին, մասնակցել են սուպերվիզիայի և աջակցության չորս հանդիպումների:

20 բուժաշխատող տեղական ՀԿ-ներից, իշխանություններից և ՀԿԽԸ-ից, մասնակցել է Շվեդական Կարմիր խաչի հետ համատեղ կազմակերպված հնգօրյա վերապատրաստման դասընթացի տեղական առողջապահության ոլորտի մասնագետների ու այն գերատեսչությունների համար, որոնք աշխատում են հակամարտությունների առնչությամբ նախկինում ազատազրկված անձանց հետ:

Բնակավայրերի ջրամատակարարում

11 առողջապահական հաստատություն Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Սյունիքի մարզերից ապահովվել է արևային ֆոտովոլտային համակարգերով՝ ընդհանուր 420 կՎտ հզորությամբ:

3 բուժակ-մանկաբարձական կետ է կառուցվել Տեղ համայնքի Կոռնիձոր գյուղում, Սյունիք, Վայք համայնքի Արտավան գյուղում, Վայոց Ձոր և Իջևան համայնքի Սարիգյուղ գյուղում, Տավուշ:

Անհետաձգելի բուժօգնության և վիրաբուժական ապահով բաժանմունք է ստեղծվել Վայոց Ձորի բժշկական կենտրոնի նկուղային հարկում:

Առողջապահություն

141 բուժաշխատող, այդ թվում՝ 47 բժիշկ/բժշկական մասնագետ և 94 բուժքույր Հայաստանի չորս մարզերի և Երևանի 10 հիվանդանոցներից, վերապատրաստվել են «Անհետաձգելի բուժօգնության հիմունքները» դասընթացի շրջանակում:
8 հիվանդանոց աջակցություն է ստացել՝ բժշկական նյութերի և սարքավորումների ձևով, այդ թվում՝ Կապանի բժշկական կենտրոնը, որը ստացել է աջակցություն կենտրոնական ներծծման համակարգի վերանորոգման և հիվանդի մոնիտորների ձեռքբերման համար:
ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) Յոլյանի անվան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի Գորիսի բաժանմունքը աջակցություն է ստացել նոր մասնաշենք տեղափոխման գործընթացում:

243 անձ՝ ներառյալ ՀՀ ներքին գործերի նախարարության 212 փրկարար, ՀԿԽԸ Տավուշի ու Վայոց Ձորի մարզերի 22 կամավոր, վերապատրաստվել է առաջին բուժօգնության հիմունքների թեմայով՝ ՀԿԽԸ հրահանգիչների կողմից:
13 բուժաշխատող Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի վեց հիվանդանոցներից ստացել է միջազգային ճանաչում ունեցող հավաստագրեր՝ «Վնասվածքի նախահոսպիտալային բուժօգնություն» դասընթացի հաջող ավարտից հետո:
2024 թ.-ին կառուցված 2 նոր բուժակ-մանկաբարձական կետ՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան և Սյունիքի մարզի Տեղ համայնքի Արավուս գյուղերում, ամբողջությամբ կահավորվել և հագեցվել են անհրաժեշտ սարքավորումներով:

ՀՀ ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի աշխատակիցները մասնակցել են զանգվածային տուժածներով պատահարների կառավարման թեմայով աշխատաժողովին և «շտաբային վարժանքին»՝ հիվանդանոցի պատրաստվածության պլանում առկա հնարավոր բացերը բացահայտելու և լուծելու նպատակով:
3 բժշկական կրթական հաստատություն՝ Երևանի պետական բժշկական համալսարանի բուժքույրական քոլեջը, Երևանի հիմնական բժշկական քոլեջը և Էրեբունի բժշկական կենտրոնում գործող Հայաստանի արտակարգ և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոնն, ապահովվել են ուսումնական սարքավորումներով:

Միջազգային մարդասիրական իրավունքի խթանում

© Միջազգային Կարմիր Խաչ

4 դասընթաց է անցկացվել Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի և Լոռու մարզերի 60 սպաների համար՝ Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) թեմայով:

30 զինծառայող ՀՀ զինված ուժերից, որոնք պատրաստվում են մեկնել ծառայության Կոսովոյում ՆԱՏՈ-ի խաղաղապահ առաքելության կազմում, ծանոթացել են Մարդու իրավունքի և ՄՄԻ հիմունքներին ՀՀ պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի ուսումնական կենտրոնում:

14 զինծառայող Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության, Մարդու իրավունքի և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Շիրակի մարզում կազմակերպված դասընթացների շրջանակներում:
ՄՄԻ թեմատիկ դասախոսություն է անցկացվել Երևանում ՀՀ պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի միջին և բարձրաստիճան 34 սպաների համար՝ քննարկելով ժամանակակից զինված ընդհարումները:
35 ուսանող և երիտասարդ մասնագետ 14 երկրներից մասնակցել է ՄՄԻ 9-րդ տարածաշրջանային ամառային դպրոցին:
17 ներկայացուցիչ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից մասնակցել է զինված հակամարտություններում և դրանց հաջորդող իրավիճակներում ՄՄԻ և Մարդու իրավունքների կիրառման վերաբերյալ դասընթացի:
10 ներկայացուցիչ տեղական խոշոր լրատվամիջոցներից մասնակցել է Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում մարդասիրական խնդիրների և դրանց լուսաբանման վերաբերյալ լրագրողական շրջայցի:
10 գլխավոր խմբագիր և տեղակալ՝ Հայաստանի հիմնական լրատվամիջոցներից, մասնակցել է փակ ճեպազրույցի, որը վարում էին Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակության ղեկավարը և Հաղորդակցության և կանխարգելման ծրագրի ղեկավարը:
14 թիմ Հայաստանի ինը կրթական հաստատություններից մասնակցել է ՄՄԻ-ի վերաբերյալ ազգային դատախաղ-մրցույթին: Մշակվել ու տպագրվել է ՄՄԻ-ի անգլերեն-հայերեն մասնագիտական բառարանը:

Տնտեսական աջակցություն

496 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի վեց և Սյունիքի մարզի ութ համայնքներից ստացել է հիգիենայի պարագաներ:

29 տնային տնտեսություն (105 անհատ) տարբեր մարզերից բարելավել է բնակության պայմանները Տների վերականգնման ծրագրի շրջանակում:

37 տնային տնտեսություն, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել է աջակցություն՝ փոքր դրամաշնորհների տեսքով:

19 առավել խոցելի տնային տնտեսություն ստացել է բազմանպատակ դրամաշնորհ՝ հրատապ կարիքները հոգալու համար:

41 ՀԿԽԸ կամավոր և մեկ աշխատակից Վայոց Ձորի և Տավուշի մարզերից անցել է տնտեսական անվտանգության հիմունքների վերաբերյալ վերապատրաստում՝ տնտեսական անվտանգության վերաբերյալ գիտելիքների ու կարողությունների զարգացման նպատակով:

31 տնային տնտեսություն (90 անհատ) օգտվել է հողերի բարելավման ծրագրից Սյունիքի մարզի Բարձրավան գյուղում, ինչի արդյունքում բարելավվել է 45 հա հողատարածք:
Նույն տնտեսությունները ստացել էն 13.5 տոննա առաջին վերարտադրության ցորենի սերմացու՝ բարելավված հողի վրա ցանելու նպատակով:

43 ներկայացուցիչ ՀԿԽԸ ղեկավար անձնակազմից և առաջատար կամավորներ մասնակցել են ազգային ընկերությունների համար նախատեսված գնահատման, իրականացման և մոնիթորինգի դասընթացին:

45 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի չորս համայնքներից (Կութ, Ազատ, Նորաբակ, Ջաղացաձոր) եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել է աջակցություն՝ փոքր դրամաշնորհների տեսքով:

103 տնային տնտեսություն (450 անհատ) օգտվել է հողերի բարելավման ծրագրից Վայող Ձորի Խաչիկ գյուղում, որի արդյունքում բարելավվել է 100 հա հողատարածք:

48 տնային տնտեսություն Սյունիքի մարզի երեք համայնքներից (Ծուռնուխ, Որոտան, Ներքին Խնձորեսկ) եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել է աջակցություն՝ փոքր դրամաշնորհների տեսքով:

50 տնային տնտեսություն՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխված, օգտվել է Հիմնատավուշ հիմնադրամի հետ համատեղ անցկացվող մեղվաբուծության զարգացման ծրագրից: Նրանք ստացել են 200 փեթակ՝ մեղվաընտանիքներով, անհրաժեշտ գործիքների 50 հավաքածու, պաշտպանիչ հագուստ: Մասնակցել են նաև 12 համայնքներում կազմակերպված մեղվաբուծության դասընթացների:

Ջինամթերքով աղտոտված տարածքների անվտանգություն

284 բնակիչ

Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ 16 համայնքներից մասնակցել է զինամթերքով աղտոտվածության (ՁԱ) ռիսկերի գնահատմանը, որի նպատակն էր պարզել առկա կարիքներն ու բացերը, ինչպես նաև ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ:

ԿԽՄԿ

28 մասնակից ՀԿԽԸ-ից, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայից (ԿԽՄՖ), ԿԽՄԿ-ից և գործընկեր ազգային ընկերություններից՝ Ավստրիական Կարմիր խաչից և Շվեյցարական Կարմիր խաչից, մասնակցեցին «Շարժման համակարգում համատեղ ազդեցության (Սևիլիայի 2.0) համաձայնագիր» աշխատաժողովին, որը կազմակերպվել էր ԿԽՄՖ-ի և ԿԽՄԿ-ի համատեղ ջանքերով:

Համագործակցություն Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ (ՀԿԽԸ)*

14 ՀԿԽԸ աշխատակից մասնակցել է Առավել անվտանգ հասանելիության շրջանակի (ԱԱՀՇ) վերաբերյալ դասավանդողների համար նախատեսված ներածական դասընթացի, որը կազմակերպվել և ուղղորդվել է ԿԽՄԿ-ի կողմից:

48 կամավոր ՀԿԽԸ Աղետների արձագանքման (ԱԱ)թիմից՝ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի ու Սյունիքի մարզերից, բարելավել են գործառնական պատրաստվածությունը հնգօրյա դասընթացի արդյունքում, որը ներառում էր լսարանային հատված և գործնական դաշտային վարժանքներ:

41 ՀԿԽԸ ԱԱ թիմի կամավոր հանգստյան օրերին մեկնել է հերթապահության Սևանի հանրային լողափ՝ ձեռք բերած հմտություններն իրական պայմաններում կիրառելու նպատակով:

19 աշխատակից ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակից և մարզային մասնաճյուղերից, ինչպես նաև 178 կամավոր մասնակցել են ՀԿԽԸ ԱԱ թիմի կողմից կազմակերպված ԱԱՀՇ տեղեկատվական հանդիպումների:

17 ՀԿԽԸ ներկայացուցիչ մասնակցել է մասնաճյուղերի ղեկավարների համար նախատեսված դասընթացի, որի նպատակն էր բարձրացնել մասնաճյուղերի կառավարման հմտություններն ու կարողությունները:

3,000 կամավոր մասնակցել է նախապես վերապատրաստված կամավոր-դասընթացավարների կողմից անցկացված տեղեկատվական 50 հանդիպումների Հայաստանի12 մարզերում՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման, հիմնարար սկզբունքների, հանձնագրի և Շարժման գործընկերների գործունեության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

23 առաջնորդ կամավոր ՀԿԽԸ 12 մարզային և տարածքային մասնաճյուղերից, ինչպես նաև յոթ աշխատակից գլխամասային գրասենյակից մասնակցել են երկօրյա աշխատաժողովի՝ նպատակ ունենալով ամրապնդել մասնաճյուղային մակարդակում գործողությունների իրականացման կարողությունները: Երևանում ենթադրվող խոշոր երկրաշարժի սցենարով 1 ազգային սիմուլյացիոն վարժանք է անցկացվել Ստեփանավանում՝ ներգրավելով ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակի և տարածքային մասնաճյուղերի աշխատակիցներին ու կամավորներին, ԱԱ թիմերին, ինչպես նաև դիտորդների՝ տեղական իշխանություններից, Փրկարար ծառայությունից, ԿԽՄՖ-ից, ԿԽՄԿ-ից և Հայաստանում գործող գործընկեր ազգային ընկերություններից: .

4 պատրաստվածության միջոցառում է իրականացվել մարզային մակարդակով ՀԿԽԸ Աղետների արձագանքման թիմերի կողմից՝ նպատակ ունենալով ամրապնդել համագործակցությունը Հայաստանի փրկարար ծառայության ստորաբաժանումների հետ:

42 մասնակից ՀԿԽԸ գլխամասային գրասենյակից և 12 մարզային և տարածքային մասնաճյուղերի ղեկավարները ներկա են գտնվել մասնաճյուղերի համար կազմակերպված երկօրյա համաժողովի:

15 ներկայացուցիչ Երևանի և Շիրակի մարզի լրատվամիջոցներից մասնակցել է մեկօրյա լրագրողական շրջայցի, որը ներառում էր այցելություն ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոն, ինչպես նաև քննարկումներ Հայաստանում ՀԿԽԸ և ԿԽՄԿ հանձնագրի և գործունեության վերաբերյալ:

*ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ իրականացված այլ գործունեությանը ծանոթանալու համար տե՛ս տեղեկագրի մյուս բաժինները:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակություն
Հայաստանում
73/3 Նաիրի Զարյան փ.
0014 Երևան, Հայաստան
Հեռ.՝ +374 297415, erevan@icrc.org
© ԿԽՄԿ, փետրվար 2026 թ.

www.icrc.org
facebook.com/icrcAm
x.com/icrcAm
instagram.com/icrc

ICRC

Գլխավոր նկարը՝ Գ. Մերոբյան/ԿԽՄԿ